



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԱՂԱՔԻԱ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆ

(ՄՆԵՂՅԱՆ 120-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)



յս տարի փետրվար ամսին լրացավ Արմաշի նախկին վանահայր և Կոստանդնուպոլսի պատրիարք երջանկահիշատակ Մաղափա աբեպիսկոպոս Օրմանյանի ծննդյան 120-ամյակը:

Այս բարեպատեն առիթով, «Էջմիածին» ամսագրի սույն համարից սկսած, հրատարակում ենք մեծանուն պատրիարքի կյանքին, ժամանակաշրջանին, գործունեության և մատենագրական մեծ վաստակին նվիրված մի բովանդակայից և խղճամիտ ուսումնասիրություն, որն անաշտորեն պատրաստել է, Ազգիս Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ, ռումիլեհայ ծանոթ մտավորական Հ. Ճ. Սիրունին:

Ավելի քան քառասուն տարի է, ինչ պատմության է պատկանում Օրմանյանը, բացառիկ դեր կատարելուց հետո հայ կյանքի մեջ: Այնուամենայնիվ դեռ հայ մամուլում միշտ արձագանքը կա նրա մեծ անվան, գործին և դերին, չհաշված Օրմանյանի իսկ գրածները իր մասին և այն հսկա գրականությունը, որը գրվել էր նրա մասին, մերթ գովեստով և երբեմն էլ՝ ֆենդադարությամբ:

Երբեմն, խույ անկյուններից, մտնով ու հոգով գանձանք ջղագրգիռ ձայներ են բարձրացնում, փորձելով ստվեր գցել մեծանուն հայ հոգևորականի կյանքի ու վաստակի վրա, ինչպես անցյալ տարի փարիզահայ

մամուլում, որտեղ հոգվածագիրը ավելի շատ շողակերտում էր Օրմանյանի կերած «յալանչի դուժա»-յի մասին: Դրանք, իհարկե, ծիծաղելի փորձեր են:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր խորին հարգանքի, ակնածանքի և երախտագիտության սրտագին տուրֆն է բերում մեծանուն պատրիարքին՝ նրա ծննդյան 120-ամյակի առթիվ, ոգեկոչելով մի անգամ ևս նրա մեծ հիշատակը և խոնարհելով նրա պատկառանք առթող մատենագրական մեծ վաստակի առաջ:

Օրմանյան պատրիարքի կյանքը ուսանելի է և գրավիչ իր ամբողջության մեջ: Նա ԺԹ դարի վերջին ֆառորդի և Ի դարի առաջին ֆանամյակի հայ հոգևորականության ամենահին և ֆատիկ, զարգացած և բազմավաստակ մեծություններից մեկն է որպես եկեղեցական, հասարակական-ազգային գործիչ և որպես մատենագիր:

Ոչ ոք Հայ եկեղեցու պատմության վերջին ժամանակներում չի ունեցել Օրմանյանի եկեղեցական լուրջ, բազմակողմանի դաստիարակությունն ու զարգացումը: Նա աֆեաջան աշխատանքով, հավատով, իմացապես և հոգեպես պատրաստվեց իր ապագա եկեղեցական կոչման համար:

Օրմանյանը որպես մարդ և հոգևորական, հայրենասեր և ազգային գործիչ, վարչազետ և մատենագիր, որպես խառնվածք և անհատականություն մի ամբողջություն էր,

որի բեղմնավոր գործունեությունը ընդգրկել է շափագանց ընդարձակ հորիզոններ, սրտեռանդն արդյունավորությամբ:

Մտա ֆառասուն տարի նա նվիրումով, սիրով և շերմությամբ ծառայել է ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻՒՆ ԵՎ ՄԵՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ:

Փառավոր, պատասխանատու, բայց միաժամանակ դժվարին և հանախ փշալից է եղել Օրմանյանի անցած գործունեության ուղին:

Բայց, անկախ հանգամանքներից և պարագաներից, Օրմանյանը ամեն տեղ եղել է ՄԱՍՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՎԻՐՄԱՆ ՄԱՐԴԻ:

Նա իր Եկեղեցական և ազգանվեր գործունեությամբ, իր նշմարտապես առաջինագարդ և ամբասիր կենցաղով, Հայ Եկեղեցու հանդեպ ունեցած պաշտամունքի հասնող նվիրվածությամբ, մանկավարժական և գրական վաստակով անմոռաց հիշատակ է թողել:

Ի դարի մեր ազգային-Եկեղեցական տարերայության մեջ Օրմանյանը զարմանալի մի երևույթ էր, մարդկայնորեն հասկանալի իր բոլոր փոքր սավերներով, որոնց վրա փորձում էին այնքան երկար կանգ առնել և խոսել նրա հակառակորդները, ոչինչ չկարենալով գտնել սակայն խոսելիք նրա իրավարժանիքների և պայծառ գործունեության մասին:

Օրմանյանը աչք է բացել հայ կաթոլիկ շրջանակներում, միջնակարգ և կրոնական-աստվածաբանական բարձրագույն կրթությունն ստացել է Հոռմում կաթոլիկների մատ, ծանրաբեռն երեք մագիստրոսական իրավ տիաղոսներով:

Այնուհետև մտա ֆառասուն տարեկան հասակում, հաստատ համոզմունքների և սկզբունքների տեր հոգևորական, բազմակողմանիորեն զարգացած և կազմակերպված միտք, վերադարձավ Հայ Եկեղեցու գիրկը:

Սխալ կյիներ և նշմարտության դեմ մեղանշում՝ Օրմանյան սրբազանի այդ հոգևոր հայրենադարձությունը «ի ծոց Մայրենի Եկեղեցույ» բացատրել վայրկենական բռնկումով, և կամ 1870-ական թվականներին Կոստանդնուպոլսի հայ կաթոլիկ կյանքը վրդովող ծանոթ Հասունյան և Հակահասունյան պայթույթով: Այդ պայթույթը ինքնին հետևանք էր 1860-ական թվականների նոր ժամանակների ոգու, Ազգային Սահմանադրության սկզբունքների, հայ կյանքի հասարակական, ազգային, մշակութային գործունեի, ազգային ինքնագիտակցության և արժանապատվության:

Այդ պայթույթը արագացրեց միայն Օրմանյանի վերադարձը հայրենի տուն:

Վատիկանը Հասունյանի միջոցով ուզում էր խեղդել հայ կաթոլիկ հասարակության

մեջ նոր ծլարձակած ազգային, հայրենասիրական շունչն ու ոգին, որոնք համազգային հողի վրա «մրրկավ բաժանված» նույն Ազգի զավակների միջև միության կովան էին հանդիսանում:

Օրմանյանը ոգի ի բռին պայթույթից զբազմ, դասախոսություններով՝ այլասերող, ապազգայնացնող այդ փորձերի դեմ, ի վերջո, 72 ուրիշ հայրենասերների հետ, վերջնականապես բարափեց իր ոտքի փոշին և վերադարձավ տուն՝ ԽՂԱՂ ԽՂՃՄՏԱՆՔՈՎ, ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ, որովհետև Հայ Եկեղեցու մեջ միայն գտավ, իր իսկ վկայությամբ, ազատ, քրիստոնեական ոգի և շունչ:

«Հոռմեադավանութենե հեռանալու միտքը իմ վրա, ոչ կիրքի մը վայրկենական որոշում և ոչ շահադիտության կեղծիք էր, այլ երկար առնե փորձված և կշռված և խոհական ֆայլերով հառաչացած գործ մը եղած է («խոհ և խոսք», էջ 6): Միաժամանակ Օրմանյանը գում է և հետևյալը. «Գրավիչ կգտնեի հայ դավանությունը, յուր հետոյա և պահպանողական, յայնամիտ և ազատախոհ սկզբունքներով (նույն տեղում, էջ 104):

Հայ Եկեղեցու ծոցում Օրմանյանի հասարակական, Եկեղեցական գործունեությունն սկսեց Ղալաթիայի ֆարոզությամբ: Այնուհետև հայ ժողովուրդին յավագույնս հանաչելու համար, բնագավառի իր հայեցի ապումների և սովորութեների մեջ, նա առաջիններից մեկը եղավ, որ 1880 թվականին ընդունեց Կարինի առաջնորդությունը, որ վճռական դեր կատարեց Սանասարյան դրպարոցի բացման աշխատանքներում: Այդ օրերին Օրմանյանի առնուր, որպես հայրենասեր հոգևորականի և մարդու, կապվեց Կարինի ծանոթ տազնապին:

Օրմանյանի տարերքը սակայն, ուսուցանելի էր, ուսուցությունը, ինչպես այդ մասին վկայում է նա: Եվ պատահականություն չէր, որ նա ուսուցչական, մանկավարժական արդյունավետ գործունեություն ծավալեց նախ էջմիածնի Գևորգյան նեմարանում, ապա Արմաշի դպրեվանդում, և հուսկ Ռուսմն, 1917 թվականին, Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում:

Օրմանյանը մի տարի մնաց Գևորգյան նեմարանում: Բայց նա ուշագրավ մի էջ բացեց Գևորգյան նեմարանի պատմության մեջ, այն դեռելով իր բուն դերի և կոչման մեջ:

Օրմանյան սրբազանի ազդեցության տակ, 1889 թվականին, Գևորգյան նեմարանը, տասնհինգամյա երկունիքց հետո, տվեց իր հոգևորական առաջին երախայրիքը Հայ Եկեղեցուն և Հայ Ազգին: Գևորգյան նեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանը, հե-

մարանի շրջանավարտներ Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գևորգ Զորեհյանը և Գլխարանի ուսանող Գարեգին Հովսեփյանը կուսակրան սարկավագ ձեռնադրվեցին, ի մեծ ուրախություն և մխիթարություն Մակար կարողիկոսի: Օրմանյանը սեր դրեց ուսանողության մեջ դեպի հոգևոր ասպարեզը և նեմարանում ստեղծեց եկեղեցական մթնոլորտ:

Արմաշում նույնպես նոր, հայրենասեր և գրագետ հոգևորականության պատրաստության հարցը արդարորեն կապվում է առաջին հերթին Օրմանյանի անվան և գործունեության հետ: Արմաշի դպրեվանդանի բարձրագույն, կենսունակության նոր շունչ տվեց Հայ եկեղեցուն: Օրմանյանը Արմաշի դպրեվանդանում արդարացրեց պատրիարքության և Ազգի վստահությունը: Նվ Օրմանյանը, իր ոգով և պատկերով, Դուրյանի հետ միասին, Արմաշում պատրաստեց եկեղեցու սպասավորության և Ազգի ծառայության նվիրված կոչման տեր, զարգացած հոգևորականների մի սերունդ, որոնցից վերջինն է Կոստանդնուպոլսի այժմյան ծերունագարդ և գրագետ պատրիարք:

Արմաշականները, գրում է բազմավաստակ բանասեր և պատմաբան Արշակ Ալպոյանյանը, «իրենց ստացած դաստիարակությամբ և ներշնչումով, խանդով ու եռանդով, նվիրվեցան իրենց պարտականության, ստանձնելով իրենց առաջարկված որքան հոգևոր, նույնքան վարչական պաշտոնները, տագնապի մը հաջորդող ժամանակաշրջանի մը մեջ, և փրկեցին Հայ եկեղեցիին վարչական ու հոգևոր կազմալուծումը, որ հայկական ջարդերուն անխուսափելի հետևանքը պիտի ըլլար» («Քորգում պատրիարք Գուշակյան», Կահիրե, 1950, էջ 2):

Օրմանյան սրբազան 1896 թվականին, բացառիկ հանգամանքների և ղեկավար պայմանների մեջ, կոչվեց Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքական Աթոռին: Բացառիկ էր ժամանակը, բացառիկ եղանակն էր դեպքերը, որոնք մյաժամանակ բնորոշում են Օրմանյանի ապրած ժամանակաշրջանի հոգեբանությունը, կրեթը, պայթյունները:

Այնուամենայնիվ, Օրմանյանը եղավ նաև բացառիկ մարդը այդ բացառիկ պայմաններին մեջ: Այդ էր ազգային իշխանության և ժողովրդի համագումունքը: Նվ Օրմանյանը, տասներկու տարիների իր պատրիարքությանը, արդարացրեց այդ վստահությունը:

Նա Աթոռ բարձրացավ երբ, Ալըգյանի թույլ և Իզմիրլյանի հախտուն պատրիարքությանից հետո, Կոստանդնուպոլսում և գալտոններում հոսում էր հայ աշույնը, Համիդի քաթր ծանրանում էր հայ հոգուր և մտքի

վրա, իսկ ժողովուրդը համակված էր սարսափով:

Օրմանյանը սիրա տվեց հուսահատված ժողովրդին և մերթ «ողոճելով և մերթ բողոքելով» և ի պահանջել հարկին նաև հրաժարականներով, կարողացավ «զսպել գազանին» և առաջի անել նոր աղետներին: Դա փոքր ծառայություն չէր այդ ծանր, մղձավանջային օրերին: Դրանով Օրմանյանը կատարեց նաև ազգասիրական, հայրենասիրական իր պարտքը:

Ստեղծված պայմաններում, ինչպես Օրմանյանն է նշում իրավացիորեն, «Ինձի կմբար հարմար կերպով, նարտար դարձվածներով, հնարավոր միջոցներով, Համիդի հայերուն դեմ ունեցած ատելությունը մեղմացնել, հալածանքները թեթևացնել, Ազգին կացությունը բարվոճել, ներքին կազմակերպությունը պահպանել, մեկ խոսքով՝ քիչ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել: Այդ ծրագիրը Համիդի ուզածը չէր, և երբ ես անուկնեռեի, Համիդի հետևող չէի ըլլար, և այսչափը բավական է իմ վրա հարուցված զբարտությունը փարատելու» («Խոնկ և խոսք», էջ 28):

Օրմանյանի պատրիարքությունը եղավ մի ծանր լուծ, նույնիսկ նահատակություն, որը նա տարավ եկեղեցու սիրով և Ազգի նվիրումով: Դիմացավ փոթորիկին և կատարեց իր պարտքը նկուն ֆաղափականությամբ, ի գործ դնելով օրմանյանական հնարամտություն և խորագիտություն:

Շատ է խոսվել, գրվել, մանավանդ Օրմանյանի պատրիարքության մասին: Նրա պաշտոնավարությունը դուր չեկավ որոշ շրջանակի և մակերեսային մտայնության տեր մարդկանց: Բայց Օրմանյանը իր կնիքը դրավ պատրիարքության շրջանի իր պաշտոնավարության և իր ժամանակի վրա:

Օրմանյանի պատրիարքությունը եղավ, ինչպես նրա փառքի, նույնքան և դառնություն ժամանակաշրջանը: Նա նույնիսկ ընկավ, կրքից կուրացած մարդկանց կողմից, ամբաստանության տակ:

Մեծանուն պատրիարքը, «Հիշատակագիր էրկոտասանամյա պատրիարքության» աշխատության մեջ (Կ. Պոլիս, 1910 թ.), պաշտոնական բացատրություններով և ստույգ փաստերով հերքեց իր դեմ եղած ամբաստանությունները՝ որ իբր թե ինքը խույ է եղել Ազգի ցավերին, դավաճանել է Ազգային Սահմանադրության, ծնկի է եկել բռնակալի առաջ, կառչած է մնացել Պատրիարքական իր Աթոռին և մեծատիրություն է հաստատել ազգային-եկեղեցական գործերում:

1913 թվականին Ազգը նրան արդարացրեց: Պատմության առաջ ևս արդարացավ

Օրմանյան, մանավանդ 1914—1915 թվականների հայկական մեծ եղեռնի լույսի տակ, երբ Կոստանդնուպոլսում ազգային իշխանության գլուխ էին կանգնել Օրմանյանի հակառակորդները:

Որհան էի յա և արդար էր մեծանուն գրագետ Գրիգոր Զահրապի 1913 թվականի հունվարին, հատենի Ազգային-Երեսփոխանական ժողովո, արտասանած հար, երբ վնովում էր Օրմանյանի բախտը. «Ըսվեցավ, թե Օրմանյան սրբազան Սահմանադրության բոլոր տրամադրությունները չգործադրեց, ուստի այդ մասին իր քրած ուխտը դրժեց: Կհարցնեմ, թե այսօր, երբ հինգ տարի ի վեր մեր Սահմանադրությունը գործադրելու մասին կատարյալ ազատություն կվայելենեմ, արդյո՞ք անոր բոլոր տրամադրությունները գործադրեցի՞նք: ...Մտածեցեմ անգամ մը, այսօր, երբ արդարությունը գործադրելու նպատակով հավաքված ենք այստեղ, արդյո՞ք արդարության գոնե տարրական և հիմնական պայմանները կհարգե՞նք մենք: Առանց վարանելու դատելու վրա ենք ամբաստանյալ մը, որ բացակա է և որ ձայնը չի կրնար բարձրացնել մեր առջև ինկզիմքը պաշտպանելու համար, նույնիսկ ամենևն բացահայտ կերպով անարդար պահանջումներու և նկատառումներու հանդեպ»:

Ժամանակակիցներից ոմանք անիրավ եղան Օրմանյանի նկատմամբ, բայց Ազգր նրան արդարացրեց:

Օրմանյան, իր դեմ եղած ամբաստանության օրերին, հանդես բերեց իր հոգու մի այլ ստատույզ գեղեցկությունը: Մանր պայմանների մեջ, լված ու մոռացված, նույնիսկ նախատված, նա մեծ մնաց իր առանձնության մեջ, շրնկնվեց նախատիմներից ու մնաց արի, աննահանջ՝ իր վշտի մեղության օրերին: Նա քեն չպահեց ոչ ոքի դեմ, չլեց իր ժողովրդին և եկեղեցուն, չդավանանեց իր կոչման և հայ հոգևորականի իր սկզբունքներին, և շրքներին ավետարանական աղոթքը՝ «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն գինչ գործեն», հաշվեց Կոստանդնուպոլսի մեկավորական իր խցիկը Բրբր փողոցում, և հայ ժողովրդի ու Հայ եկեղեցու հանդեպ ունեցած իր անվարտ ծառայության պարտքը վերեց մատենագրական, եկեղեցա-պատմական մնայուն աշխատանքներով, որոնք անբառամ պսակ հյուսեցին նրա անվան շուրջ:

Այդ տարիներին, մանկավարժ, բեմբասաց, վարչագետ Օրմանյանի մեջ հանդես եկավ նաև մտքի, գրչի մարդը: Եվ նա, այդ ասպարեզում նա, հայ ժողովրդին ներկայացավ մախաղը լի մատենագրական հարուստ բերքով:

Օրմանյանը, օժտված լինելով գրելու բացառիկ կարողությամբ, փայլուն իմացականությամբ և խոր հմտությամբ, նաև ունենալով աշխատասիրության կիրք, այդ տարիներին թողել է մի ամբողջ գրադարան մատենագրություն, որն իր ծավալով, ինչպես նաև իր բովանդակությամբ, պատկառանք և ակնածանք է առաջացնում:

Այդ շրջանին գրվեցին Օրմանյանի հետևյալ գործերը. «Համապատում» (1911 թ.), «Հայոց եկեղեցի» (1911 թ.), որի ֆրանսերեն հրատարակությունը կատարվեց 1910 թվականին, «Հիշատակագիրք երկուսասնամյա պատերազմության» (1910 թ.), և ի վերջո «Ազգապատում»-ի Ա և Բ հատորները (1913—1914 թ. թ.):

Այս գործերի մեջ հանդես է գալիս հոգևորն և հմուտ աստվածաբանը և ԱՆԱԶԱՌ ՊԱՏՄԱՌԱՆՆԸ մանավանդ:

Օրմանյանը օտարներին, ինչպես նաև Հայ եկեղեցու զավակներին ծանոթացրեց Հայ եկեղեցու պատմությունը, նրա վարդապետությունը, ազգային նկարագիրը, ժողովրդավարական ընտրական սխտեմը: Հայ եկեղեցին Օրմանյանի գրչի տակ ներկայանում է հայեցի իր հարագատ դիմագծով, ինչպես նաև իր ինքնուրույն տեղով քրիստոնեական եկեղեցիների մեծ ընտանիքի մեջ: Օրմանյանից առաջ և հետո փորձեցին գրել Հայ եկեղեցու պատմություն, բայց ոչ ոք, նույնիսկ մինչև այսօր, չի համարձակվել մոտենալ Հայ եկեղեցու նոր պատմություն գրելու աշխատանքին: Հիսուն տարի հրապարակի վրա է Օրմանյանի «Հայոց եկեղեցի»-ն:

Որպես ՊԱՏՄԱՌԱՆ, Օրմանյանը նմանապես ունի իր ուրույն տեղը: Նա անխառն պրպտող է, դասավորող, վերլուծող, ունի պատմելու տաղանդ, դեպքերը տեսնելու և վերլուծելու յուրահատուկ մեթոդ և պատմության մոտենալու անաշառ եղանակ:

Հայ եկեղեցու պատմության նվիրված ԿՈՒՅՈՒՅՆԻՆ գործ է նրա «Ազգապատում»-ը իր բոլոր բերություններով, որտեղ տրվում են «Հայ Ուղղափառ եկեղեցվա անցքերը սկիզբեն մինչև մեր օրերը հարակից ազգային պարագաներով պատմված»: «Ազգապատում»-ի Գ հատորը, հետմահու հրատարակություն, տպված Երուսաղեմ 1927 թվականին Բարգեն եպիսկոպոս Կյուլեսեյանի «հոգողությամբ», Հայ եկեղեցու պատմությունը հասցնում է մինչև Իզմիրլյանի ընտրությունը՝ 1909 թվականը: Այնուամենայնիվ, Օրմանյանի հետմահու Երուսաղեմում 1929 թվականին լույս տեսած մի այլ մեծ աշխատության՝ «Խոնկ և խոսք»-ի մեջ, շափահանց արժեքավոր նյութեր կան մինչև հեղինակի մահը՝ 1918

բվականը, Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ:

Օրմանյանը մեր օրերի Չամչյանն է, առանց սակայն ունենալու երա նախապաշարումները, կողմնակալությունը և նեղմտությունը:

Օրմանյանը, իր գրական վաստակով ևս, արժանապես և հաստատ կերպով բազմել է հայ մտքի աշխատավորների շարքում:

Մեծանուն պատրիարքի ծննդյան 120-ամյակին նվիրված այս բնուցիկ եոթերը փակելուց առաջ, պետք է կարևորությամբ արձանագրել նաև, որ Օրմանյանը, Հայ Եկեղեցու ծոցը վերադառնալուց հետո, «բանի և գործով», միշտ որդիական հարգալից հարաբերության մեջ է եղել Ամենայն Հայոց Հայրապետության հետ, իր ամբողջ պաշտոնավարության ընթացքում: Նա ամեն տեղ, միշտ, բարձր է պահել Մայր Աթոռի՝ որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերագան Աթոռի հմայքը և բոտն կերպով պայքարել է հոգևոր այդ հեղինակությունը նվազեցնել փորձողների դեմ:

Օրմանյանի պատրիարքության տարիները մանավանդ եղան ամուր և հուսալի՝ հենարան՝ հատկապես իրիմյանի կաթողիկոսության օրերին: Հակառակ իրիմյանի գործունեության մեթոդների հանդես ունեցած իր վերապահումներին, Օրմանյանը, ամենայն

բարեխղճությամբ, գործակցեց իրիմյանի և Մայր Աթոռի հետ, եղավ Մայր Աթոռի կողմին, երա մանավանդ դժվարին օրերին՝ 1903—1904 թվականներին Եկեղեցական կալվածների գրավման հարցում, ինչպես նաև կրիիկյան Աթոռի և Մայր Աթոռի իրավասությանը վերաբերյալ այլ հարցերում, որոնց մասին նա հանգամանորեն խոսել է «Ազգապատում»-ի Գ հատորում:

Նայյան պատրիարքից հետո, Կոստանդնուպոլսի Աթոռի վրա նստած երկրորդ գիտուն պատրիարքը հանդիսացավ Օրմանյանը և իր կենիքը դրավ իր ժամանակի ազգային-եկեղեցական կյանքը հուզող բոլոր դեպքերի վրա:

Մեծ էր Օրմանյանը որպես անձնավորություն, որպես եկեղեցական, վարչագետ ու ազգասեր, ուսուցիչ և ֆարոզիչ, բարոյախոս և ուսումնասիրող, կարողություններ, որոնք նրան պատկանելի էին դարձրել հայ և օտար եկեղեցական և պետական շրջանակներում՝ միջազգային շափերով:

Մաղափա արքեպիսկոպոս Օրմանյանի անունը անմահ ու պայծառ կմնա վերջին ժամանակների մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, որպես մեծ եկեղեցականի, որպես մեծ ազգային գործչի և հայ մատենագրության անխոնջ վաստակավորի:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

